ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2

ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/73 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **27 նոյեմբերի 2025թ.**

2025թ. նոյեմբերի 17-ից 27-ը, ՀՀ, ք. Երևան, Թևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի Ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ պահեստամասերի ձեռքբերման ԵԱ-ԷԱՃԱՊՁԲ-25/73 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Ն. Սուքիասյան՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենի տեղակալ,
Վ. Սանթուրյան՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի գլխավոր ֆինանսիստ,
Ն. Բաղդասարյան՝ «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի հաշվապահ:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ն. Սուքիասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով թիվ 1 Հավելվածով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, անուղղի առաջարկված միավորային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների մասին:
4. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:
6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. նոյեմբերի 17-ին, ՀՀ, ք. Երևան, Ծևոսյան 9 հասցեում գտնվող «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի շենքում ժամը 16:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1-ին | Անվադող 195/75R16C ձմեռային | 1500000 | 18.11.2025 16:00 | 13500000 |
| 2-րդ | Կուտակիչային մարտկոց 6CT-140A HIGER KLQ 6770 G Ավտոբուսների համար | 1500000 | 18.11.2025 16:00 | 8480000 |
| 3-րդ | Կուտակիչային մարտկոց 6US-85A Gazel CitY Միկրոավտոբուսների համար | 1500000 | 18.11.2025 16:00 | 2960000 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ իրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե, հեռ. | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|
| 1 | «TNMM Trade» | - | - | - |
| 2 | «Արպանիվ» ՍՊԸ | ք. Երևան, Նար-Դոս 122, 091205624 | automaxtender@mail.ru | 09209297 |
| 3 | «Փ. ՍԱՄՍԱՐ» ՍՊԸ | ք. Երևան, Պռոշյան., 29բն., 077621296 | Artakabgaryan97@gmail.com | 08274346 |
| 4 | «ՀԻՊՈԿՐԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ | ՀՀ կոտայքի մարզ Զորաղբյուր 2224 Ջրվեժ Այգետարածք 4/115, 099966646 | hippocrates0109@gmail.com, | 03584501 |
| 5 | «Լոյս-Մոտոր» ՍՊԸ | Ք. Երևան, Զավարյան 12, 077044254 | Tender@lavavto.am | 00430814 |

2025թ. նոյեմբերի 18-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ **«TNMM Trade»**-ի, ում կողմից ներկայացված հայտում բացակայում են Հավելված 1-ով ներկայացվող «Դիմում-Հայտարարություն» փաստաթուղթը և Հավելված 1.3-ով ներկայացվող «Իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև» փաստաթուղթը, ինչպես նաև «Առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր» փաստաթղթում բացակայում է հրավերով պահանջվող տեղեկատվությունը, մասնավորապես լրացված չէ առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանման, ապրանքային նշանի, մակնիշի, արտադրողի անվանման վերաբերյալ տեղեկատվությունը և տեխնիկական բնութագիրը:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025թ. նոյեմբերի 18-ին, Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Չ/Հ | Զբաղեցրած տեղ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |
| 1-ին | 1 | «TNMM Trade » | 13500000 | 1500000 | 0% | 1500000 | 1500000 | 0% | 1500000 | **Գնահատվել է անբավարար և մերժվել է** |
| | 2 | «Արպանիվ » ՍՊԸ | | 11177500 | 20% | 13413000 | 11177500 | 20% | 13413000 | |
| | 3 | «Փ. ՍԱՄՍԱՐ» ՍՊԸ | | 12000000 | 20% | 14400000 | 12000000 | 20% | 14400000 | **Մերժված** |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | 4 | «ՀԻՊՈԿՐ ԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ | | 36000000 | 20% | 43200000 | 36000000 | 20% | 43200000 | Մերժված |
| 2-րդ | 1 | «TNMM Trade» | 8480000 | 1500000 | 0% | 1500000 | 1500000 | 0% | 1500000 | Գնահատվել է անբավարար և մերժվել է |
| | 2 | «Արպանիվ» ՍՊԸ | | 7028000 | 20% | 8433600 | 7028000 | 20% | 8433600 | |
| | 3 | «Հույս-Մոտոր» ՍՊԸ | | 7065110 | 20% | 8478132 | 7065110 | 20% | 8478132 | |
| | 4 | «Փ. ՍԱՄՍԱՐ» ՍՊԸ | | 7500000 | 20% | 9000000 | 7500000 | 20% | 9000000 | Մերժված |
| | 5 | «ՀԻՊՈԿՐ ԱՏ ԴԵՆՏ» ՍՊԸ | | 36000000 | 20% | 43200000 | 36000000 | 20% | 43200000 | Մերժված |
| 3-րդ | 1 | «TNMM Trade» | 2960000 | 1500000 | 0% | 1500000 | 1500000 | 0% | 1500000 | Գնահատվել է անբավարար և մերժվել է |
| | 2 | «Արպանիվ» ՍՊԸ | | 2447333 | 20% | 2936799.6 | 2447333 | 20% | 2936799.6 | |

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. նոյեմբերի 20-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և մասնակիցին առաջարկել սահմանված ժամկետում՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, շտկել հանձնաժողովի կողմից արձանագրված շտկման ենթակա անհամապատասխանությունները՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. նոյեմբերի 24-ին Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Մասնակցի կողմից սահմանված ժամկետներում չի ներկայացվել հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2025թ. նոյեմբերի 25-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Հիմք ընդունելով Կարգի 67-րդ կետը՝ Պաշտոնական աղբյուրների միջոցով չստուգել մասնակցի կողմից համապատասխանելու վերաբերյալ հայտով ներկայացված հավաստման իսկությունը՝ պատճառաբանված որոշման բացակայության հիմքով:

3. «TNMM Trade»-ի հայտը գնահատել որպես անբավարար և մերժել՝ հիմք ընդունելով Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:

4. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները կիրառելու նպատակով «TNMM Trade»-ի հայտը մերժելու վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի տնօրենին՝ սահմանված կարգով:

5. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

6. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-3-րդ | «TNMM Trade» | անբավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 4. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոգրյալը՝ 2025թ. նոյեմբերի 25-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-ին կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի և ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Ա. Առաքելյանը ներկայացրեց Հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Հանձնաժողովը որոշեց.

1. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի 2) ենթակետով սահմանված պահանջների համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել համակարգի միջոցով գեներացվող հայտարարություն/ներ/ը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ, պարզաբանումներ չեն եղել և հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Ն. Սուքիասյան ____________

*Հանձնաժողովի անդամներ՝*

Վ. Սանթուրյան ____________

Ն. Բաղդասարյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Ա. Առաքելյան ____________